

ՏԱՍՏԻԿԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԱՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միամյա խմբագրատան մէջ:

Պատարագողարարը գիտնում են ուղղակի
Тифлисское Редакция «Манук»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի հիւրերի և առն օրերից):

Յայտարարութիւն ընդհանրապէս և անհի լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԻԱՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Նուխուց: Նա-
մակ Վերին-Ագուլիսից: Ներքին լուրեր: ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ապստամբութիւնը Բաղրամեան
թերակողմ վրա: Ֆրանսիա: Խաչկաւ: ԽԱՌՆ
ԼՈՒՐԵՐ: ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ: ՖԵԼԻԵՏՈՒՆ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՒՈՒՑ

Յունիսի 27-ին

Նուխին իր ներկայ գրութեամբ միայն նրանով
է նշանաւոր, որ մի փայլուն անցեալ է ունեցել:
Արարեալ անկեղծան ձգված գործարանները իրանց
տիրութիւնը պատկերներով, դատարկ մնացած բարձրան-
ապանները, ուր լին են եղել հազարաւոր վաճառա-
կաններ, այն խանութները, որոնք տարեկան 300
րուբլի վարձ ընդունելով տիրող համար այժմ ստորա-
ցել են մինչև 15 րուբլի, պարզապէս և անկաս-
կած ապացոյցներ են, որ Նուխու փառքը ու
պատկեր նրա փառաւոր և բարեկէ. անցեալին է
պատկանում, այնպիսի մի անցեալով, որով Նու-
խին ներկայումս հազիւ հող հնչում է և սպորում:

Այս, Նուխու բնակիչ ժողովուրդը, պարծնա-
ւով իր կողքած քաղցր և սրտաշարժ անցեալի
յիշատակներով, միեկիտութեամբ է իրեն միայն այն
կարծադան յոյսով, որ մարդուն երբեմն կամ
գրգռում է դժբախտութեան խորտաբերութիւնը ան-
դաւանդ, կամ բարձրացում է նրան դեպի բարձր
զինովը՝ ամենաբարձր գագաթը: Այս, Նուխին
երգում է, որ իր համար կրկին մի նոր դարուն է
բացվում և նա որպէս նորա թագուհի բարձ-
րացնելով իր գլուխը և ոտ գնդով առեւտրական
պատերազմի դաշտի մակերևութի վրա, կրմարուէ
յառաջաւոր քաղաքների դէմ ու կը յաղթէ և իր
համար մի նախանձելի անկեղծ նորանով կը

ՖԵԼԻԵՏՈՒՆ

Առաքինազարդ համբերութիւն ունեցող երկու
աղ կայ աշխարհում, մինչև Մեխային սպասող
հրէան է, միւսը 61-երորդ յօդուածին ակնկա-
ն հայր: Հրէան տանջվում է և Մեխային դա-
տաւոր յիշելով է միեկիտութեամբ, հայն էլ չար-
արկութեամբ է և բարեկամութեամբ յոյսով է սպորում:
Աստուած երկու աղգին էլ համբերութիւնը անել-
ի, միայն չը գիտցուի թէ առաջ ով պիտի գա-
րէից Մեխան թէ հայերի բարեկամութեամբ, սա-
րարը մարդաբնի գործ է, մի մանկանայու չէ
լարող լուծել, դժբախտաբար ներկայ դարում ան-
հաճ մարդաբնիք չեն տեսնուում, իսկ մահկանա-
տաւորապաշտներ լին են, շարունակ ուղում
ն մարդաբնիքը վար թափելու տալ: Վերջերս
Օլանդացի մի աստղագետ նոր գտել է, որ լու-
մինը մինչ 1883 տարեկան սկսում, կամաց կա-
նաց պիտի մոտենայ և ասանց մի քնառ տալու
կրկնապիսի պիտի կազմի, և որովհետեւ երկրա-
բաշտը 49 անգամ մեծ է եղել լուսնեակից, հետե-
ւոր կազմելուց յետոյ չորացած գրգռի ձև պի-
տի առնէ եղեր. շատ հաւանական է որ դիտա-
ւորող ուղեղն է իր գլխին ձեռ տալ երկրաբն-
իքն:

վերադարձնէ այն ինչ կորցրել է և ինչ որ հա-
մարվել է նրա փառքի գրգռելը — առեւտրը:

Նուխու գաւառում և Նուխու քաղաքում
առեւտրի գլխաւոր ֆակտորները եղել են. չե-
րամապահութիւնը, Գաղտնանից բերելիս լազը-
նեկի չաւերները և եակնիները, սարաքանը,
տորներ և զանազան պտուղները: Այս բոլոր թուած
ֆակտորների գործեմամբ Նուխու մէջ տարե-
կան խաղաղիս է եղել աւելի, քան թէ մի միլիոն
րուբլի: Բայց այժմ հետքերն անգամ էլ չէր տես-
նի ձիւ, ինչ եղել է 15, 20 կամ 25 տարի սրա-
նից առաջ: Յիշած առարկաների անկման պատ-
ճառը մի առ մի ու առանձին առանձին թուելը
աւելորդ է համարում. տակայն անհրաժեշտ և կա-
րելու է համարում փոքր ինչ կանխել առաջինի-
այն է չերամապահութեան վրա, որից մեծ կա-
խում է ունեցել ժողովրդի տնտեսական կեանքի
բարգործութիւնը անցեալում և տարակոյտ չը կայ, որ
պիտի ունենայ և ապագայում:

Արեւելու ըստ ըստի առաւել կեանքում ստացվե-
լիս է եղել մինչև 1864 թվականները: 1864 թը-
ականից սկսած չերամապահութիւնը մի տարա-
փելի հարուածի տակ է ընկնում ու հետզհետեւ
նուազելով, աստիճանաբար արդիւնաբերութիւնը
հասնում է այն զարհուրելի հետեանքներին, որին
վկայել կարող է Նուխու գաւառում անցեալ
1881 թվականը: Սրա պատճառը քաղաքային է
արեւելուի օրերի հիւանդութիւնով, որը զգալի
է եղել 1864 թվականից և զարգանալով տարից
տարի չարանակով է ցարդ: Հետաքրքրանք կը
հարցնի ընթերցողը՝ օրտնից և ինչից է զոյացել
այդ հիւանդութիւնը Վովկաւում, և ինչ միջոցով
կարելի է դրա առաջն ունել: Ահաւասիկ պատ-
ման լսիր:

Արեւելուի օրերի հիւանդութիւնը սկսվել է
Ֆրանսիայում առաջին անգամ 1854 թվին. դա-
նից առաջ եկանուոր շատ առատ և արդիւնաբեր
է եղել, այնպէս որ ստացվելիս է եղել մինչև
1,625,000 պուղապի թաց բոժոժ: Յիշմանց 10
տարեկայ այս եկամուտը սկսում է պակասել և

1865 թվականին նա հասնում է միայն 250 հա-
զար պուղի, որը տալիս է եղել մի հաւաստի կո-
րուստ աւելի քան եւթը միլիոն րուբլու իւրա-
քանչիւր տարի: Ֆրանսիական տերութիւնը նկա-
տելով այս մեծ և զգալի կորուստը, ձեռք է մեկ-
նում այս բանին, հրահրելով խորհուրդ բոլոր
գիտնական անձանց այս հարուածի դէմ պատե-
լաղմուտ, որը շատանում էր տարուց տարի ոչն-
չացնելով միշտ միտաբանայ վաստակները: Երեւելի
գիտնական Պատտորը յանձն է առնում աշխա-
տութիւն և առանց ձանձրանալու սկսում է իր
վեճը գործը: Նա գտնելով հար պատերազմելու
ընթերձ հիւանդութեան հանկուղ «սելիւլեր» ա-
նուանալ սերմեր խոչորացողի միջոցով, յաղթող
է հանդիսանում 1870 թվականում 1871 թվակա-
նից սկսում է Ֆրանսիայում իւրաքանչիւր տարի
եկամուտը տեւանալ և անցեալ տարի Ֆրանսիան
ունենում է 500,500 պուղ բոժոժ: Խոչորացողով
հանած «սելիւլեր» անուանած սերմերը տուել են
միջին թվով իւրաքանչիւր մէկ մանկուղ 30 դըր-
վանայ թաց բոժոժ. սրա հետեանց պէտք է հա-
մարած, որ անցեալ տարի Ֆրանսիայում թիֆին
տերի պուղը ծախվել է 90 կոպ: Պատմում թէ
ինչպէս է պատրաստվում «սելիւլեր» անուանալ
սերմերը: Երբ թիֆեաները բոժոժից դուրս են գա-
լիս, այնուհետեւ սկսում են ործն ու էլը մի մի
բոխաւ առանձին առանձին վերջնել և փոքրիկ
քաթման, կամ ուրիշ տարակա և մարդու փայտի
կտորների վրա սերմը ածել տալ. սերմը ածելուց
յետոյ ործն թողնում են իր կամքի՝ իսկ էլը
վերջնում են մեղմում-թափում, ձմեռում, այ-
նուհետեւ խոչորացողի տակ հետագոտում. եթէ
հետագոտութիւնը ցուց է տալիս որ թիֆեան հի-
ւանդ է, այն ժամանակ նորանայ կոչացած սերմը
ոչնչացնում են, եթէ ընդհանրապէս առողջ է լի-
նում թիֆեան, նորանայ ստացած սերմն էլ ա-
ռողջ է համարվում, ուստի այսպիսի սերմը վերջ-
նում են պահում միւս տարում որպէս հանելու հա-
մար: Եւ այսպիսի եղանակով կամ միջոցով պատ-
րաստած առողջ սերմերը կոչվում են «սելիւլեր»:

Եւ ինչ հուռ և տնտեսաբան են, մինչև անգամ
շատ ածան են մոռնում, երկու բնույթների լա-
րով ինքնիքներն կախելով ինքզնիքում են, միայն,
առաւանակում մի հրէայ, որ բերձայի դոներին էր
պատկերաւ եղաւ, սա՛ կրակ, բոց և կայծ չունէր,
այնու հանդեմ դրամատաճարի հերոսներին այն-
պիսի կայծակնաճար մի գարկ տալով շանթաճա-
րեց, որոնց քառակնում կրակ գցելով, արծիթի-
թերը միմիւր դարձուց: Արծիթիթից գնելը այժմ
աստիճանաբար, բայց շատ անգալի կերպով
բարձրանում են, քաղերը անհամեմատ են, գնե-
րը նապատառակ արագութեամբ իջնւ, իսկ կը-
րիայի քաղերով են բարձրանում: Փողի կորուստը
վիլնայիներին աւելի վատ աղբեղութիւն արաւ
քան թէ հրդեհի աղէտը. սրա տպաւորութիւնը
կարճատեւ էր, որի համար կարելի է ասել, «չը
կայ չարիք առանց բարեկաց», վասն զի հրդեհ
ամենքն վիճակը կերպարանաւորեց, սմանք
մեծամեծ գումարներ ժառանգելով հարստացան,
բռնաւոր և նախանձուտ էրիկ ունեցող կանայք
այրի մնալով հանգստացան, նմանապէս փոխա-
գարձ պայմաններով անհանգիստ եղող մարդիկ
էլ իրանց կնիկներից աղատվեցան, հանգստա-
կութեամբ միլիոններ հաւաքեցան, վերջապէս
ամեն պատկաւրելի պատկանող հրդեհալը հիւ-
թապէս և բարոյապէս օգուցեցան, իսկ բերձայի
դոների հոգը քաշողն ով է. բախտին այս հա-
րաւածիցը չարաբար քնառ կրող խեղճ յուսահա-
տեաները էլ նախառականաւ անձնաւորանա-
լեամբ այժմ դռնում են իրանց յախտնական
փրկութիւնը:

Փարիզի բերձան էլ առակալի հարուած է կրել,
այնակ միլիոնի խօսք չը կայ, միլիարդներ! ար-
դէն սրանք անձնապաշտութեան մէջ մեծ հռչակ
ունեն, ահաւասիկ յարմար առիթը ներկայացաւ,
ուսաղիւններում ընկձկնել չէ մնացել, բոլորն էլ
ծախվել են, անձնապաշտները միմեանց մրցելով
գնում են անձանթի աշխարհը: Ֆրանսիական լը-
րագիրների խառն լուրերը լին են անձնապաշ-
տութեան և ինքնագործեան դէպքերով, փողոց-
ներից անց ու դարձն անգամ վտանգաւոր է լի-
նում, տների պատուհաններից ինքզնիքներն փար-
նետողներ յաճախ պատահելուն պատճառաւ
Այսպիսի դրամական կորստի դէպքերում կամ
սիրահարական հանգամանքներում, ինքնապաշ-
տութիւնը, Ֆրանսիացուց համար մի գաւաթ գի-
նի խմելու նման ամենապարզ մի գործողութիւն
է առում լրագիրը: Միանկիցող և առակալի կեն-
դանի մնացողները դարձանամբ միմեանց հարց-
նում են եղել թէ, ինչի եւ սպասում, ինչի չես
գնում, իր թէ հասարակ մի ճանապարհորդու-
թիւն լինել անդիւր աշխարհ գնալը, իսկ նա պաղ
արեւում պատասխանում է թէ, վերջին յոյս, մո-
տը մնացած մի բանի հազար ֆրանքն էլ եթէ
կորչի, այն ժամանակ կիրակի օրը ճաշից յետոյ
ժամը 7-ին անմիջապէս Սենտ գեորդ նետվելով
ինքզնիքով պիտի լինի:

Այս մեկնութիւնը ինչն ըստ ինքեան բացատրում
է թէ՛ որքան դժուարութիւն, որքան միջոց և որ-
քան համբերութիւն պէտք է ունենայ մարդ, որ
կարողանայ յիշած միջոցով մեծ քանակութեամբ
սերմեր պատրաստել:

Մտաքննող օրերի հիւանդութիւնը կովկասում,
որ անուանվում էր խաղիան բոժոժ, սկսվել է
1864 թվականից: Այս պէտք է յատկապէս լինի
կարգապահ այս երկրից յաճախակի և շատ սերմ
հանելու պատճառով, որ երկը են չարանակ 1859
թվականից սկսած մինչև 1864 թիւը սերմեր առ-
նելու համար: Եւսպոնիայի սերմը այսուհի բերելը
սկսվել է 1867 թվականից. այդ սերմերը տեղա-
թիւնն է բաժանել տուել և երկու կամ երեք առ-
բուց ընթացքում լաւ եկամուտ է տալիս: Եւս-
պոնիայի տեսակ բոժոժները միայն կովկասի այս
կողմերում են քիչ գոյութիւն ունեցել և ստ էլ
խոյն և խոյն կանհետանայ, եթէ այս հիւանդու-
թիւնը երկար շարունակ իր գոյութիւնը: Մի քա-
նի դեղեր, այն է՝ Սուլամ, Գելիկ, Գաշադել և
Վարդաշէն, որ համարեա իւրաքանչիւր տարի հա-
զար պուղից աւել բոժոժ են եղել տալիս, ան-
ցեալ տարի 100 պուղ չեն տուել: Բայց և այն-
պէս այն եւս պիտի խնայած, որ եթէ առաջ մէկ
տուն վեր էր առնում օրինակ 10—15 միւսաւ ու
ստանում էր բաւականին բոժոժ, այժմ վերջնում
է երկու այնքան և աւելի զարձեւալ կիսով չափ բո-
ժոժ չէ կարողանում առանալ: Այս հիւանդութեան
տուած քեաները մեծ են և զարհուրելի. ցաւալի է
որ տարուց արդիւնաբերութիւնը հեշտ թվանշա-
նեղով ցուց տալ չեմ կարող, որովհետեւ այսուհի
վիճակագրական տեղեկութիւններ քաղելու աղբիւր
չը կայ և եթէ այդ միջոցից դուրի չը լինէինք
այն ժամանակ թվանշաններով կը բացատրէինք
տարեկան եկամուտների տարբերութիւնները և
այն ժամանակ ընթերցողը համար բոլորովին կառ-
կածանք չէր մնայ մեր յայտնած ճշմարտութեան
մէջ:

Վերե բերած փոքր ինչ պատմական նկատու-
ղութիւնից ընթերցողը կը տեսնէ արեւելուի որ-

Ֆրանսիացուց, Տունիզում տիրած Մֆաքս ա-
նուն ծովագետի քաղաքը պաշտպանող Շէյխ
Մոհամեդ Էլ-Էլ-Ֆ Կ. Պոլիս է գնացել, որան
թիւրք թերթերը Մֆաքսի դիւցազնը կոչում են,
ինչպէս Կոստան բաշային Պելիպայի դիւցազն են
անուանում: Մֆաքսի դիւցազնը մեծ ընդունելու-
թիւն է գտել Կ. Պոլիս հրատարակվող «Էլ ձե-
վայի» արարական թերթի խմբակիր Սելիմ Բա-
րիս Էֆենդիի կողմից, նմանապէս արբունական
պաշտոնի ներքինների գլխաւոր Հաֆիզ Պելիպ
աղան Մֆաքսի դիւցազնը ճաշի հրահրել է, վեր-
ջը սուլթանին ներկայացել է, որուն յարգանք և
մեծարանքը վայելուց յետոյ, թէ ինքը Մֆաքս
մէջ էլ-Էլ-Ֆ և թէ իւր արբանակները, չը մրսելու
համար, իւրաքանչիւրը մէկ մէկ դուր ծանրադիւ-
մուտները ընծայ են ստացել սուլթանից: Պա-
տուկ բնակարան և շքեղ սենեակներ պատրաս-
տվել են Շէյխի համար, որտեղ 150 արարացի
նշանաւոր անձինք ընդ նախադասութեամբ դիւ-
ցազնին ժողով գումարելով, վերջին որոշում տուել
և վճել են որ մինչ փետրվար ամսոյ վերջը Փը-
րանսիացուց և ոչ մի հատին չը խնայելով գա-
մենքը Միջերկրական ծովը թափեն:

Տեղեֆոնը մեծ ծառայութիւններ է անում մարդ-
կային ընկերութեան: Ընդունի եկեղեցիներում
տեղեֆոններ են դրել, շատերը առանց եկեղեցի
գնալու իրանց տանը նստած հանգիստ լսում են
քարոզները, թատրոնի երգերը և ազգային ժողով-
ներում խօսված ատենաբանութիւնները լսում
են աների մէջ, ոճրագործների բանտերին մէջ
դնում են տեղեֆոններ, և արանց ծածուկ յոստե-
ցութիւնները բաւ առ բաւ լսվելով, քաղաքի-
ները երևան են հանում: Բայց անցեալ օրեր Լոն-

Առհասարակ հրէաները վաճառականական և
եկեղեցական պայմանների մէջ ամեն տղերից ա-

դերի հիանալի ծրարական հասարակական մեծամեծ փառանքը և տերութեան հողատարութիւնից յառաջացած արդիւնաբեր և փրկարար հետեանքը, նա և կը նկատուի այն դժուարութիւնները, որոնցով պատրաստուում է սեւեռլիւր անուանած սերմերը: Տարակոյս չը կայ, որ մի մարդու համար շատ դժուար է կատարել այդ գործը, տարակոյս չը կայ, որ Ֆրանսիայի պէս—մեր իր նամատար տերութիւնը պիտի զննածարար կարկառէ իր ձեռքը զկայ այդ անար և նրա պատճառով կորուստը:

Մակալան ֆրանսիացի պ. Լերիսէն այս ամառ Նոտա մէջ սկսեց լսելիլիւր պատրաստել. եւ քանի որ անգամ անձամբ վկայ և ակնատես եւ եղել այդ գործին և մի քանի անգամ պարուն Լերիսէի օգնութեամբ եւ եւ հետադարձ խոչորացոյցի տակ թիթիւն և ինքս տեսել ու փորձել այդ դժուարութիւնները: Պարուն Լերիսէն պատրաստել է 30,000 հատ փաղափ կտոր և երեք ամիս շարունակ ընկերանալով խոչորացոյցի հետ հետադարձել է 30,000 թիթիւն. ու իր հետադարձութեամբ, բաժանելով հիւանդ սերմերը առաջիկայ, տապել է «սեւեռլիւր» անուանեալ սերմերը: Պարուն Լերիսէն կատարել է այդ գործը պարտքով ու պատճառով և մեծամեծ տանջանքներով. նա մեծ յոյս է ունեցել տերութեան վրա և ցարկ չէ կորցնում իր յոյսը տերութեան օժանդակութիւնից: Տարակոյս չը կայ, որ խնամատար տերութիւնը չի խնայի իր միջոցը օգնելու և վերջի վերջոյ պարուն Լերիսէն կը համար իր տօնելի նպատակին. և այսու ամառնախն օրոքն որ ուշ լինի տերութիւնից հանելի օժանդակութիւնը, այնքան և փոքր է համարնի գործին: Մինչև այժմ ձմեռ է եղել, բայց այսօր կամ վաղը դարուն է բացվելու. այդքան սերմերը պահպանելու համար տեղ և միջոց է հարկաւոր, բաժանելու և զրուս բերելու օգնութիւն է հարկաւոր. այս բոլորը որտեղից կարող է ձեռք բերել պարուն Լերիսէն կըր նա, իր ունեցած և չունեցածը գործ դնելով այս բանի վրա, այսօր հաջիւ կարողանում է նա իր օրական սպրտարը հալիւրթիւր: Ահաւասիկ այսպէս է մի ծանր գործ կատարել պարուն Լերիսէն և այսօր աչքը ձգած ուղարկում է թէ կըր պիտի ստանայ տերութիւնից օժանդակութիւն, որ կիսակատար ճանապարհի վրա չը մեղցնի իր վատասը:

Կը յուսամ, որ մեր գիտնական ազգօժանները ուշ կը դարձնեն մեր թոյլ ձայնին և իրենց ուժով հաշտու ու ձայնով կաշխատեն տակի կեանք տալ այս փոքր գործին: Գրել վերջնել գրել շատ մարդու գործ է, բայց զգալ և կատարելը սակաւաթիւներին....

Մ. Կպ.

դժուար տեղեֆոնը մի աղանդ համար անախորժ մի հետեանք է սեւեռլիւր: Աղանդին իւր խոտաբայը տիրուհոյ զգո՞ւ լինելով, որս սեւեռլիւր մաքրած ժամանակը ինքն իրան չգիտի մըտնել, անպիտան կին՝ ստել է, յետոյ տիրուհին սեւեռլիւր դարձել, սեղանի վրա դրած տեղեֆոնին անիւր դարձել է և իսկոյն լրտես մաշինը չգիտի մըտնել, անպիտան կին՝ խօսքերը արտասանել է. տիրուհին աղանդու ձայնը ճանչնալով անմիջապէս աղանդին վաճառել է: Երազիրը ասում է, թէ այս դէպքին վրա, աղանդին տեղեֆոն գտնելով տեղի մէջ ծառայութեան չեն ուզում մանել:

Անգղիացւոյ արտատուը պատուաւորութիւնը շատ անգամ ծաղրանդութեան հանելով, խելագարութեան է մօտենում, այնպէս որ եթէ ուրիշ հարուստ չը լինէին, վաղուց չղթայակալ էին յիսարանացում: Ֆրանսիան Անգղիոյ հետ միացնելու նախադիւր, այսինքն Մանչի ծովի յատակից չիմլիլիլու տունէլի ձեռնարկութիւնը արգելել սպող զիմարած կուսակիցներ կաղմիլել են Անգլիայում, բանաւոր պատճառ յայտնելով թէ մեր բրիտանական կղզին այլ ևս կղզի ըլլալէ պիտի դադրի, մինչ չեն կարող այս անպատուութիւնը մարսել: Հակառակ այս տարօրինակ դիմադրութեան, թէպէտ և տունէլի աշխատութիւնները շարունակվում և առաջ տարվում են, բայց միթէ կարելի բան է ինքնասիրութիւնը այս աստիճան ծիծաղելի կեանք հասցնել. մեր թիթիւնեցի ժողովը Պարլիս անգամ այսպիսի յիմար բան չը մտածեր, ասիստ չէ դրան խնեթ են ասում:

Ամերիկացիք օրուստ և ձեռակերտի մէջ կըր-

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱՌԴՆԵՐՈՒՄԻՑ

Յունվարի 29

Հաս տարօրինակ բնակարաններ տեղ մարդիկ կան Արուսիում: Մի բան անում են իրանք էլ չը հասկանալով թէ ինչ են անում: Այսօր 22-ին հողաբարձութիւնը մի քանի հարցերի համար և ընտրութեան ժողով էր հրաւիրել: Այդ հրաւիրական թղթի վրա մէկը գրել էր՝ «Էս եցի, բայց...», իսկ միւսը՝ «Եւ ու է, չեմ կարող գալ»: Թէ պարոնները ինչ են կամեցել ասել այդ գիտեն, միայն կամեցել են իրր թէ մի բան լինեն գրած: Ուսումնարանը ծաղրածութեան առարկայ դարձնել եթէ ուրիշ բան չասեմ, վերին աստիճանի անգաղաքավարութիւն է:

Մեր երեսփոխները առհասարակ այնքան տանք են վերաբերվում դէպի դպրոցները, այնքան վատ են ճանաչում և կատարում իրանց սուրբ պարտաւորութիւնը, որ մի և նոյն է լինեն թէ չը լինեն նոքա: Քանի և հինգ երեսփոխանները հաղիւ կէտը, այն էլ մեծ դժուարութեամբ, ներկայ են գտնվում ժողովին: Եթէ չեն կարողանում կատարել իրանց պաշտօնը, աւելի արդւութիւն կը լինէր նրանց կողմից գործից հրաժարվել և ոչ թէ ուսումնարանը ծաղրածութեան առարկայ դարձնել:

Այդ ժողովում քննվել են երկու հարցեր. ա. հարցը պ. Արախանցի հարցն է, որ ուսումնարանին իր գործարկած 2,900 ռուբլին հրաժարվում է վճարել: Պ. Արախանցը կամենում է, ինչպէս օրինակ, միայն 300 ռուբլ վճարել, իսկ մնացեալ 2,600 ռուբլու փոխարէն նա նուիրում է ուսումնարանին մի շինութիւն, որ տարեկան մօտաւորապէս մինչև 50 ռուբլ արդիւնք է բերում:

Բ. հարցը ուսումնարանապետին հողի վրա նոր շինութիւն անելն է: Ինչպէս որ լսեցի, երեսփոխանութիւնը արդեն վճարել է շինութիւն անել այդ հողի վրա և մինչ 4,000 ռուբլ փող միտել: Երեսփոխանները պէտք է շատ լաւ հասկանան, որ շինութիւնը Արուսիում ոչինչ օգուտ բերել չէ կարող: Ինչ արդիւնք է ստանում ուսումնարանը վաճառել 22 խանութից—մի չնչին գումար: Խլուր տեղից նոր շինութեան համար 4,000 ռուբլ ջուրը ձգել և կրակել թէ այդ շինութեան մէջ կը պահենք բամբակ հանձարելու մաշին, որից Արուսիում այս րոպէին 2 հատ կայ, կրակել թէ կը պահենք այնտեղ փոստի կայարան, որը դեռ հարց է կըր բայցվի Արուսիում, թէ ոչ և այլ այսպիսի հազարում մի երևակայական երազներով սպառնալու ուսումնարանի սպառնալ, —այդ խոհեմութիւն չէ:

պաղատեց միջոց մանուկ ետեղին են ընկած, լսելով որ փարկու և Վիլնիայի բերձաններում բազմաթիւ անասնաբաններ կան, բեթովելի գիւնը 9/0 50 պակասեցրել և յայտարարել են թէ անձնատանները թանկ չը մտնելու. համար 15 օր սպասել մինչև որ բեթովելները ուղարկվին: Գարձեալ ամերիկայի հանձարել մի արուստապէս հնարել է թուարանութեան մի փոքր մեքենայ, որով շատ դիւրին և արագ հաշիւ կարող է անել գումար և բազմապատկութիւն: Այս մեքենան ուրիշ քաղաքներից տակի հարկաւոր է Թիֆլիսի վաճառակահական և պաշտօնական գրասենյակներին համար, որտեղ այժման գործածված հաշիւառարանների արդուկից մարդ կարծում է թէ ընկոյզ են մարում և կամ աւագից քարեր ջոկում:

Նախագահական Գիթօյին դատաստանը անգաւալի կերպով վերջացել է: Գատաւորը Գիթօյին ոչ թէ խելագարեալ, այլ սուտ խնեթ լինելուն կատարելապէս համոզված լինելով, մահվան դատապարտել է: Գիթօն դատաւճիւր լսելով, ձեռքը սեղանին ուղղվել մի հարուած է տուել և պնդել է որ մահտան պատկերը առ ժամանակ ուշացնեն:

Ինչ արտաձու ունեն, հարցեր է դատաւորը: Գիթօն պատասխանել է.

—Պատճառը շատ պարզ է, եւ մահից չեմ վախենում, եթէ ուզում էք վաղը դիմ կանցնել, բայց ցաւում եմ ձեզ նման դատաւորի և ձեր դատաստանական ժողովի վճիռ կայացնելու եղանակին վրա. ինչ ասելի նախամեծարելի է Գիթօ լինելու քան ձեզ ձեզ նման դատաւոր. եւ կը ներմ ձեզ, որովհետեւ չը գիտեք ինչ էք գործում. հրեաները և բուսաղմի կործանման ժամանակ զալիլիացիներին

եթէ երեսփոխանութիւնը կամենում է օգուտ տալ ուսումնարանին, իմ կարծիքով, աւելի լաւ կանէ պ. Արախանցի նոր նուիրած շինութիւնը նորոգել, աւելացնել, յարմարացնել, թէ կուզ հենց մի 1,000 ռուբլ միտել դրա վրա և եւ հաւատաւոր լինէ, որ աւելի շատ արդիւնք կը ստացվի, քան թէ նոր շինութիւնից, որ կամենում են սկսել:

Պ. Արախանցի գործը, փառք Աստուծոյ, որ այսպէս վերջացաւ. իսկ մի քանի պարոնների գործերը շատ լաւ ապագայ չեն խոստանում մեր ուսումնարանին: Լսելով է, որ մի քանի պարոններ յառաջիկայ մայիսից կը հրաժարվեն իրանց վճարների տոկոսները վճարելուց: Տայ Աստուած, որ սուտ լինի այդ լուրը....

ՆԵՐՍԻՆ ԼՈՒՐԵՐ

«Моск. Телеграфъ» լրագիրը հաղորդում է, որ այս օրերս եկա Պետերբուրգ յայտնի նկարիչ պրօֆեսոր Յովհաննէս Ալվարօվսկի, և իր սովորութեան համեմատ, իր հետ բերել է շատ նոր պատկերներ: Այցեալ տարվա ամառվայ վերջը և աշունքին պ. Ալվարօվսկին ճանապարհորդում էր. նա առաջ Անգլիա գնաց, իսկ յետոյ Կ. Պոլիս և Աթէնք: Հնչում է գուշակել, որ վերջին ժամանակում Ալվարօվսկի նկարած պատկերները նկարադրում են իր այցելած երկիրների տեղերը: Բաղի դրանից, կօչեցիկացում մի քանի պատկերներ կան, որոնց մէջ ցոյց են տրված Յունաստանի հին և նոր պատմութեանը վերաբերեալ զանազան էպիզօդներ:

Նայն լրագրին հաղորդում են, որ այս օրերս Նոր-Նախիջևանում թողլուտութիւն տրվեցաւ հրատարակել հայ օրիորդաց Գօգոյեան ուսումնարանի կանոնադրութիւնը: Այդ ուսումնարանը հիմնվում է տեղացի վաճառական հանգուցեալ Գօգոյի վրա, որը վաթսու թվականների վերջերում մի գումար կապակեց վերոյիշեալ ուսումնարանը պահպանելու համար:

Մեր երկրկայ համարում տպեցիք Ներսիսեան դպրոցի եօթներորդ դաստան աշակերտների նամակը, որով հերքվում է այն լուրերը թէ նայն դպրոցի Ա. Բահաթրեանց վարժապետը ծեծում է աշակերտներին: Բայց մենք թէ բերանացի և թէ գրաւոր բազմաթիւ տեղեկութիւններ ունենք որ պարուն այն աստիճան ծեծում էր փոքր դաստանների աշակերտներին, որ նրանց քթերից արիւն էր գալիս: Հասերը վկայում են որ պ. Բահաթրեան ծեծում է, բայց ոչ դը

կտորեցին, բայց 40 տարի ետքը Աստուած նրանց պատժեց. հիմա ինչ կը սպանէք, սակայն վերջը միլիթանտոր անուղ ամերիկացիները արեան մէջ կը թաթախել. խոհեմութեամբ վարկեցէք, զոյգ կաղեք, ինչ հետ հասարակ մահկանացուի մի նման մի վարկեք, դիմ սպանել տալով ձեր վրա մեծ պատասխանատուութիւն պիտի ստնէք: Այս բարբառնջանց դատաւորը ասանց կարեւորութիւն տալու ամենայն խոհեմութեամբ Գիթօյին մահվան վճիռը վերջնական կերպով արտասանել է, որ Վալիսի գտնել բանտումը կախիլ ըստ նոր սօմարի յունիս 30-ին կէսօրի և ժամը երկուսի մէջ տեղը:

Օրիորդներին աչքի լոյս: Աստուայի Նոր—Չէլանդում աղջիկ չէ մնացել. ամուրի երկտասարդներ ուղում են ամուսնանալ, աղջիկ չը կայ: Անգղիայից 500 աղջիկ բեղբրած մի մեծ շոգեհատ յունիս ամուսն արդեն ճանապարհ ելած է Նոր-Չէլանդի:

Լրագիրը սրբախ սրբախ հետեալ լուրն է հաղորդում:

«Ֆրանսիայի վաղմի թագաւորութեանց և նախկին կայսրութեանց ազամանդիս թագ և պատկերներ պիտի ծախվին: Մրանց մէջ ամենաթանկարկները Աստուայի թագահիննից Մարի Աստուանէտի և կայսրուհի Լօմէնիի դուխները և պարանոցները կըրնն զարդարող քարերն են: Արամանները, արտաստաց, իսկ կարկինանները՝ արեան կաթիլներ յիշեցնում են, արդեօք ո՞վ կը համարձակի գնել, բայց չքեղ և հագուստներ են գոհարները,

քաղութիւն չունի հանդէս դուրս գալ և հրազարակապէս յայտնել այն, ինչ որ գիտէ, պարզ յայտնելով կամ ստորադրելով իր ազգանունը: Վերջապէս ում հաւատանք, երբ կը պարզվի հարցը:

Այդ գրում են ԱՅԱԼԻՔԱՆԻՑԻ: «Վաղուց է արդեն որ «Մշակ» լրագրի համարները ստանում ենք փոխանակ առաջիկայ պէս շաբաթը երկու անգամ, միայն մի անգամ, այն ինչ՝ «Кавказъ» լրագիրը կանոնադրապէս շաբաթը երկու անգամ է ստացվում: Ստացածներն էլ կըրնն անկանան են ստացվում. օրինակի համար նախ հանում են 17 և 18 համարները և ապա 15 և 16 համարները և այլն: Կարծում ենք որ այդ անձրութիւնների պատճառը Ախալցխայի փոստատունն է,»

Նայն տեղից մեզ գրում են: «Վերջին ժամանակ քաղաքիս մէջ կրկին սկսում են երևան գալ զոռութիւններ: Այցեալ օր մի տուն կողպակցին, բայց զոռերը հանդիպելով մի քանի մարդկանց, փախան: Մարդիկ նրանց ետեղ ընկան և մէկի ոտը կարողապան վերաւորել: Մի այլ անգամ զոռերը փորձեցին ծածկ կրպակները դռները, բայց նոյն իսկ խանութը մտնել չը կարողացան: Զարմանալին այն է, որ այդ գող և առաքակ անձինք յայտնի են ամբողջ քաղաքին, բայց ոչ ոք չէ մտածում և չէ համարձակվում նրանցից ազատելու:»

Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի վարժապետ, պ. Աւետիք Տէր-Յակովբեանց խնդրում է մեզ տրակել հետեալը: «Ձեր լրագրի մէջ տպված լուրերը պ. Ա. Բահաթրեանի մասին, ինչպէս ձեզ շատ լաւ յայտնի է, թէ դպրոցում և թէ քաղաքում մեծ արուկ գցեցին: Հասերը, այդ պատճառով, կտրեցին: Եթէ այդ լուրերը հաղորդողները նայն իսկ դպրոցի ուսուցիչներն են, ի միջի այլոց ունենք և ինչ են կարծում այդ լուրերի տուգող: Ուստի, պարտաւորութիւն եմ համարում հրազարակապէս յայտնել, որ եւ միանգամայն ոչ տուսակ լուրեր տուած չեմ ձեր լրագրին:»

ՆԱԽԻՑԻՑ մեզ գրում են. «Նոտիս գաւառի Սարաթաու դիւղում մի կին հիւանդ է լինում: Մի առաւուս, դեռ լուր չը բացած, նա վերցնում է իր նորածին որդուն և անցայտանում Հիփթօված դիւղաձեղով թէ այդ լուրերը հաղորդողները նայն իսկ դպրոցի ուսուցիչներն են, ի միջի այլոց ունենք և ինչ են կարծում այդ լուրերի տուգող: Ուստի, պարտաւորութիւն եմ համարում հրազարակապէս յայտնել, որ եւ միանգամայն ոչ տուսակ լուրեր տուած չեմ ձեր լրագրին:»

Հաստ առնողները կը լինեն. լաւագոյն է նայն միլիթանտորը որբանոց և դպրոցներ հաստատուելով ապագայ սերունդին արտաստեղներ սրբել, քան թէ այնպիսի անօգուտ յիշատակներ պահելով՝ պարծնալ:

Մեր Հայաստանի թագուհիներից ապակիի կտորներ անգամ չեն մնացել, բայց բազմաթիւ հայ տիրուհիներ ունենք, որոնք ծանրապէս գոհարակց և մարգարիտներով պաճուճեալ են, սրանց փայլ և շողիւնը բաւական են բերաւոր հայ մանկուղ դատարանութեան լոյս հնարել:

Թագաւորները այս տարի դադարեցան հետ մըրցուհիներ ուղում են անել: Պարտաւոր թագաւորը Շէքաւոր թագուհիներ է, Հիփթայի թագաւորը վիպասանութիւն և դրամաներ է գրում: Անգղիայի թագուհին մի գրեց հեղինակում է, որ գարնան պիտի հրատարակվի, Զօլանդայի թագաւորը «Գլխի» անունով մի թատերգութիւն է շինում: Յուստատանի թագաւորը «Սօլլաու» մահչ վերնադրով մի դրամա է պատրաստում, վերջապէս բոլոր ինքնակալները դրականութեամբ են արարապում: Հաստ գովելի գրաւորներ, դուռ պատերազմը կը մտնան:

Մենք հայերս, եթէ չունենք թագաւորապետ, գնեմ նախարարազուն իշխաններ ունենք, սքառնչ են շինում արդեօք. ունենք իրանց գեղին պատմութեանը անձամբ ըլլալէ գատ մինչև անգամ հայերն էլ չը գիտեն:

Արտ. Կ

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

БИБЛИОТЕКА И КАБИНЕТЪ

ДЛЯ ЧТЕНИЯ

При библиотекѣ (гал. Арцруни № 149 и 150) гдѣ была «Центральная Книжная Торговля», съ 10-го января открытъ кабинетъ для чтенія, въ которомъ получаютъ болѣе 60 периодическихъ изданій мѣс. столич. и иностранныхъ. (франц. и нем.). Библиотека значительно наполнена и пополняется новыми книгами. Приняты всѣ мѣры къ удовлетворенію г. г. подписчиковъ и читающей публики въ кабинетѣ.

3—3

ԾԱՌԱՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ
քան թէ ուրիշ տեղ. ԹԷՑ, կակաո, ՇՈՎԱԿ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, աճաններ, բաժակներ, բոկալներ, թէյ, յամաններ, սուգօկներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՐՆԵՐ, երես լուսանալու աճաններ, ԿՈՂՊԻՆԵՐ, ԶԳԵՍԱԿԱՆԵՐ, զրալներ, դանակներ, ԳՐԻՉՆԵՐ, խաղիթ, ծրարներ, տետրակներ, մատաններ, ՀՐԱՑԱՆԵՐ, ԲԷՂՈՒԼԵՐՆԵՐ, մէջքակապներ, կէճօնկա, ԹԱՄԲԵՐ, տանձեր, ութօններ, ՄԱՀՃԱԿԱՆԵՐ, երեսբրդներ, թաշկինակներ, կանանց գուլաններ, մարգրիտանց գուլաններ, տուպակի սապօն, հոտուէտ ջրեր, շերտալ, ցիրարան մաղինգիտ, խնայի գինի, պորափէյն, խերես, կօնիակ և 1,000 այլ առարկաներ: ԱՆԳԼԻՍԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ՆՈՅՆ ՏԵՂԸ փառապաններն ՄԵԾ քանակութեամբ ծախվում է թէ՛ 8. պուզերով 40, 46, 52, 58, ր., իսկ Ֆուսիտով 1 ր. 1 ր. 10 ր., 1 ր. 20 ր., 1 ր. 40 ր., 1 ր. 60 ր. և 1 ր. 80 ր., իսկ ամենաբարձր թէյը Ֆուսիտ 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹԷՐԻ:

ՀՐԱՑԱՆԵՐ 20—60 ր. և 204-ԲՈՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., բէյօլիներ 4—34 ր., ԲՈՒԼԴՈԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շեֆիդի դանակներ 3 ր. 50 ր. գլխիներ, ալբոմներ կիսապնով, Ֆրիտաներ և այլն: Ամենամեծ պահեստ հրացանների և բէյօլիների թէյֆրտում:
100—100

ԱՐԴԷՆ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ռուսաց յայտնի գրող Վ.ՈՒՉԵՏԻՉԻ «ДВѢ ЕЛКѢ» մասն կապան գրքուկի հայերէն թարգմանութիւնը «ԵՐԿՈՒ ՏՕՆԱԾԱՌ» անունով:

Այս գրքուկը ընդունել էր ապագրելու Հայ և Բէն գրքերի հրատարակչութեան ընդ կեդրոն լինելու րայց իրանից անկախ պատճառներով ինքն ընկերութիւնը յաջողութիւն չունեցաւ ապագրելու: Տպագրված է Հայ և Բենի թղթի վերայ խոշոր տարեբով:

ԳԻՆԵՆ Է 20 ԿՈՊԵԿ:

Կարելի է ստանալ թէ՛ կէս տրոսն կան գրադաճառանոցից և թէ՛ թարգմանողից՝ հետեւեալ հասցեով:

Тифлисъ—на Авлабартъ Ивану Петровичу Назарянцу.

ՎԱՃԱՌՈՒՄԵՆ ՄԻՆՁԵՒ ԶԱՏԻԿ զխարկներ 1 ր., ֆուֆայիներ 2 ր. 75 ր., բրինձներ 4 ր., բիճակներ 8 ր. ամբողջ հաղուսա 13—19 ր., զրալ, մահուր, արիօ, սրբիներ և ալբոմներ կէս գնով: Հնդկական բրինձ 6 ր., սագօ և պերլովայա կրուպա 9 ր., պանիր շատեր 70 ր., Նշապա կոլմանի 18 ր. ֆուստը, լուծողական ձեթի պիլիկներ 2 ր., լուսաքի փաշի 5 ր.: **ՆՈՐՈՒԹԻՒՆ:** Մեղրամմ և արծաթէ մամեր 35 և 42 ր. ֆուստը: Մեծ քանակութեամբ անգլիական և ֆրանսիական մահապաններ 30% էժան քան թէ ուրիշ տեղ, այսինքն երկրանների համար 4 ր., մեծերի համար 12 րուրուց: **ԻՍԿԱԿԱՆ ԱՆԳԼԻՍԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:**

15—36

ԻՐԱԻԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿ

Կոթովինսկի պրոսպեկտի վրա, տուն ճարտարապետ Բէյօի: Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներէից:

Կիրակի, ամեն 21-ին, ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ յօդուա հայոց ընդհանուր ռուսացական ժողովի լինելու է ԿՈՆՑԵՐՏ, որին կը մասնակցեն՝ օր. խորոզներ, պ. պ. Ալիխանեան և Ղորղանեան, Մարիամեան-Յովհաննեան և ար. Գալանեան օրիորդաց ուսումնարանների աշակերտուհեաց և Ղերմեան հոգեւոր զարանցի աշակերտների երգեցիկ խումբը:

Ցումանները վաղորդ կարելի է ստանալ Կենտրոնական և Կովկասեան գրադաճառանոցներում: պ. պ. Մատուրեանի և Տէր-Յովհաննիսի մագաղաններում: Իսկ կօնցերտի օրը ժողովարանում:

2—3

ՎԵՐԱԳՈՒՆՆԵՐ 4 ր., ծըծողներ 1 ր., ծաղիղ աթոռներ 1 ր. 50 ր., ՓԱՅՏ-ԱՌՈՒ 4 ր., ԲԱԶԱՌՈՒ-ՄԱՀԱԿԱՆ 10 րուր և աւելի, թէյի բաժակներ 25 և 30 ր., մի աման քորոցներ 50 ր., պատուէա ծխողների համար 60 ր. ֆուստը, անգլիական ՎԱՆՆԱՆԵՐ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻՍԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:**

10,000 գրգ գուրաններ 25 ր.—ից գրգը, 10,000 գրգ կանանց ԳՈՒԼԻՐԱՆԵՐ 30 ր.—1 ր., 7,000 մատուցարաններ 5 ր.—5 ր., 1,000 ՄԱՀԱԿԱՆՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բամբակ. 1 ր.—1 ր. 30 ր., պուրուսինա 40 ր.—1 ր., 300 հատ բէյօլի 4 ր.—35 ր., 700 պրոմ ԿԻՍԱԿՆՈՎ, 10,000 ֆուստ թէյ թէյՍԱՄԱՆՈՎ 1 ր. 65 ր. երկաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար: Մախվում են **ԱՆԳԼԻՍԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:** 87—100

ԽԱԻԻԱՐ առաջին տեսակի 70 ր. նոր խաւիար առաջին տեսակի 1 ր. 20 ր., շորի համար շէտականներ 30 ր., բաղկաթոռ-մահապաններ 10, 14 և 18 ր.: Որեւորում կը ստացվի **ՊԱՆԻՐ** շէտեր 60 ր., ֆուստը: **ԱՆԳԼԻՍԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:** 10—10

Վաճառվում են 15,000 ամաններ առաջին տեսակի 15 ր. հատը, 12,000 խրուստալի բաժակներ 25 ր. հատը, 10,000 րօկալ և բաժակներ 10 ր. հատը, 10,000 մատուցարաններ և կողպէքներ 15 ր. հատը, 10,000 տոնգ 8—40 ր. հատը, 10,000 պիւնիներ 5 ր., 5,000 շէյ պօր-գէյն և խէրս 1 ր. հատը, 2,000 արշին կլէօնկա 60 ր.—2 ր. ուրշինը, 2,000 զիւմին մատուրներ և գրաւիթներ 8 ր. զիւմինը, 2,000 ֆ. հնդկական բրինձ 7, 8 և 10 ր. ֆուստը, 1000 ֆուստ լէպօշկա 50 ր. ֆուստը, 600 անգլիական բէյօլի ր. 4—31 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, զրալ, արիօ, ալբոմներ, ձեռնփայ պարաններ, զլխարկներ, փարսիկներ, հաղուսա կէս գնով: Մախվում է **ԱՆԳԼԻՍԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:** Նոյն տեղը ծախվում է ծախյին **ԽՈՏ** պուզը 2 ր. 50 ր.: 58—60

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐ ԳՈՐԾԻՔ ՅԱՐՄԱՐ ԵՒ ՁԵՌՆՈՒՄ ԱՄԵՆԱԿԱՐՃ ԺԱՄԱՆԱԿՈՎ ԵԿԵԼ ԵՄ ԹԻՖԼԻՍ ԵՒ ԲԵՐԵԼ ՆՈՐ ՀՆԱՐԱԾ ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՄԵԲԵՆԱՅ ՊԱՏԱՌԻԿ


Այդ մինչև այժմ չը տեսնված մեքենան բերված է **ԱՄԵՐԻԿԱՅԻՑ** և անհրաժեշտ է տրնային գործածութեան համար, որովհետև փոխարինում է ՈՒԹ գործիչներ հետեւեալ աշխատանքների համար. սրել ԳԱՆԱԿՆԵՐ, ՄԱՐԱՏՆԵՐ, ՄԱՆԳԱՂՆԵՐ և այլն ամենայն աջողութեամբ և արագութեամբ: Հինգ րոպէների ընթացքում կարելի է սրել մի զիւմին դանակներ:

Գործ է ածվում սարդին ձրկների արկղիկները բանալու, թրթր կարտեւր և իրեւ **ՄՈՒՐՃ** մեխեր խիլու համար:

Այդ գործիքը օգնութեամբ աւելի լաւ կարելի է կտրել **ԱՊԱԿԻ**, քան թէ **ԱՍՄԱՅՈՎ**, բացի այդ կարելի է ամենատարբեր փորագրիչներ անել ապակիի վրա:

Այդ գործիքի զինը նշանակված է **ԱՄԵՆԱԶԱՓԱՌՈՐ** այն գործարանից, որի միակ գործակատարը ես եմ, որպէս զի այդ օգտակար գործիքը որքան կարելի է շատ տարածվի:

Վերականգնեցեալ **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** փրկողաճնող: Գինը 2 ր. շէյը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 ր. **ԱՆԳԼԻՍԿԱՆ** խանութի մէջ:



Ամերիկայի, Անգլիայի, Երանսիայի և Գերմանիայի մէջ Թ տարվայ ընթացքում այդ գործիքից ծախվել է մօտ 4,000,000 հատ:

ԱՄԲՈՂՋ ԳՈՐԾԻՔԻ ԳԻՆԸ Ի ՐՈՒՐԼ Է

100 հատ կամ աւելի գնողների համար 15% զիջումն է տալու:

ՎԱՃԱՌՈՒՄԵՆ ԿԵՍԿԱՎԻՓԵՏՐՎԱՐԻ 21-ԻՅ: **ԽԱՆՈՒԹԻ ԳՏՆՎՈՒՄ** Է ԳՅՈՎԻՆՍԿԻ պրոսպեկտի վրա, Բէյօի տանը, Կերկրի քաղցրեղենների խանութի հանդէպ:

1—2



Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻԻՂ**, մազերը ամրացնող համար, 1 ր. ամանը՝ փրճին գլխացուի գէտ, **ՏՈՒԱԼԵՏԻ ՍԱՊՈՆ** և հոտուէտ ջրեր և այլն: 81—100

ՎԻՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բաղկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջին փողոցում Կատարիկաց փողոցի անկիւնում ՄԻՓԱՅԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաբաղադրացի կարող են զիմել այս հասցեով. Тифлисъ, Михайлу Н. Теръ-Никогосову.

143—150

Առաջիկայ 1882 թուականին Շուշի քաղաքում կը հրատարակվի հայերէն լեզուով գրականական-քաղաքական և ազգային ամսագիր:

„ԳՐԾԻՔ“

„Գործիք“ իւրաքանչիւր համարը բաղկացած կը լինի 5—6 թերթից (80—90) և գուրա կը գալ իւրաքանչիւր ամսի վերջում:

Նախադիւծ

- ա. Ժամանակագրութիւն. տեղութեան կարգադրութիւններ: Ռուսաց, արաստահմանի և Կովկասի կանքի նորութիւնները:
- բ. Քննական յօդուածներ հայերի և նոյա գրացի ազգերի անտեսական, բարոյական և մտաւորական գրութեան մասին:
- գ. Վէպեր, մանրամէկեր, զրոյցներ, նկարագրութիւններ, ճանապարհորդութիւններ—ինքնուրոյն և թարգմանական:
- դ. Մատենադասութիւն.—քննութիւն հայերէն լեզուով տպագրվող գրքերի, նոյնպէս այն օտար գրքերի, որոնց նիւթը հայոց ու Կովկասեան կեանքիցն է առնուած:
- ե. Քաղաքական տեսութիւն:
- զ. Ներքին տեսութիւն:
- է. Մանկավարժական Ժամանակագրութիւն:
- ը. Այլ և այլք:
- թ. Նրբէ յաւելուած եւրօպական և առեաց ընտիր հեղինակների գրուածների թարգմանութիւն:
- Յայտարարութիւններ:

Հրատարակութեան (12 տետրակ) տարեկան գինն է տմեն տեղ . . . 8 րուրի
վեց ամսուանը 5 րուրի
երեք ամսուանը 3 րուրի

Վաճառվում են խիլ է.

Օտարաբաղադրացի կարող են զիմել այս հասցեով. Шуша, Симеону Ахумянъ, учителю армянской семинаріи.

Խմբագիր-հրատարակիչ Միլէօն Հախումեանց